

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 241

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Թերթերը՝ 337։—Պրակները՝ 30, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ ԺԲ՝ 2, Ա, ԺԴ և Լ՝ 11, ԻԳ՝ 13 թերթից։—Մեծությունը՝ 18,1×14,5×7,5 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն, ողորկ թուղթ։—Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի երկու երեսին ճնշումով գծեր են քաշված, զարդեր և ծաղիկներ նկարված։ Կազմի կռնակի կաշին պոկվել և ընկել է։ Կազմի երկու երեսների ներքին մասում կպցված է տպածո կարմրավուն շորի նույն կտորը, որի վրա տպված է զանազան զարդեր։ Ձեռագիրը ժամանակին ունեցել է երկու բռնիչ, որոնք հետագայում ընկել են։ Սույն գրչագիրը դրված է հաստ և դիմացկուն ստվարաթղթից շինված մի տուփի մեջ, սրճագույն գույնի, որի չափերն են 20,6×16,2×8,7 սմ.։ Վրան գրված է 2 թիվը։—Պահպանակները՝ ձեռագրի սկզբի պահպանակը ընկել է, իսկ վերջում կա մի թերթ խունացած մագաղաթ, որի տեքստը Ցուղարերից Ավետարան է։—Գիրը՝ ուղղագիծ երկաթագիր։—Ժամանակը՝ Ժ—ԺԲ դարեր։ Վրան կա հետևյալ հիշատակագրությունը (բոլորգրով) «Ես Տէր Պողոս ի» և (նոտրգրով) «ստացա»։—Վիճակը՝ բավարար, սակայն ԺԲ պրակից պակասում է 10 թերթ։—Գրությունը՝ միասյուն։—Դատարկ թղթեր՝ չկան։—Տողերը՝ անհամաչափ, 25—31։—Գծումները՝ ճնշումով։—Գիրը՝ բոլորգիր։—Զարդագրություն՝ ձեռագիրն ունի մեկական սիրուն գլխազարդ, մեծ լուսանցազարդ, խաչ, երկու թռչուն և երկու այլ թռչուն մարդկային գլուխներով (թ. 6ա)։ Կան նաև բազմաթիվ թռչնագրեր, զարդագրեր և մի զարդագիր Ջ մարդկային դիմագծով (թ. 193բ)։—Գրիչը՝ անհայտ։—Պատվիրատուն՝ անհայտ։—Մաղկաղը՝ անհայտ։—Ժամանակը՝ ԺԴ—ԺԴ դարեր։ Վայրը՝ անհայտ։—Նաեռությունը՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեի առաջնորդարանից, Վեհափառ Հայրապետի միջոցով, 1963 թվականի նոյեմբեր ամսին։

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 6ա.—Գրիգորի եռամեծի քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ, արարեալ բանս խրատականս ոգէշահս, տունից Տէրունականաց, ի պատիւ սրբոց։ Եւ ի պատճառ գիտութեան ախմարաց։ Մանաւանդ ի յողբս արտասուաց անձանց թախծելոց։ Յաւէտ ի ճշգրտութիւն կարգաց ուղղափառաց, և յեղծումն բարբաշմանց չարափառաց։ Ի յիղձ մաղթանաց ոմանց բանասիրաց, եղբարց հարազատաց։ Նորին աշակերտաց։ Աւգնեա հոգի Աստուած։ Վասն տարէմտին քարով, այլև ի խորհուրդ ժամահարին, և թէ տարի է Քրիստոս, ի բանն որ ասէ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 337բ.—Յիշեա և զիս Տէր զեղկելի գրիչս և քեզ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Թիւ 2։

Թ. 5բ.—Մեծ վարժապետն աղիս հայոց՝ երանե-

---

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից։

լին Գրիգոր, յաճախ բանիւք զայս յօրինեաց՝ որպէս հմուտ հռետոր։ Ծրագ են բանք սուրբ մատենիս ի յընթացումն անմոլոր, քանզի սովաւ ուղիղ վարին վարդապետաց դասք բոլոր։ Որպէս Պօղոս երեքտասան յառաքելոցն դասուց։ (Եվ երկու տող վերոհիշյալի կրկնությունը)։

Թ. 153բ.—Ուրախաց յիշատակ և Աստուած ողորմի կենի։

Թ. 154բ.—Տես ի ներքոյ. զսիրուն օրինակն։

Թ. 222բ.—Թուին ՌԿ (1612 թ.) ի Մարաշու սովտայ մի եկաւ եկաւ ի մայրաքաղաքն Սիս և աւերեաց զբոլոր քաղաքն և ամենայն քաղաքացիքն խեղճ եղան ոմանք ի Կաւֆայ և ոմանք ի Պուղտանու երկիրն և ոմանք ի Լէհ ի առաջմանէ թէ ի Սիս և թէ ի Կաւֆայ, կամ ի Պուղտան և Լէհ ամենեքեանն, որժամ որ ցրուեցան ի Սբսու եկին գիւրեաց մարդիք տեսան, բաղում ուրախութիւն եղև, այնհետև ի գնացին ի Սիս բաղում ողակէին սչերց. .....պարքեւք։

Թ. 224ա.—Ոհանէս Գառնեցուն դեկտեմբերի ԻԹ տեսիլն։

Թ. 244ա.—Ադամ Նախահայր։

Թ. 329բ.—Ես նուաստ տառապեալ ոգի Մկրտիչ վարդապետս ի յերկրէն Տարոնոյ, ի գեղջէն որ կոչի Բաղու, ընդ հովանեաւ առ յոտս ի Ցիննակնեայ վանացս, որ յայժմ կոչի Սուրբ Կարապետ, ի յազգէն Ցոհնայ, որ գնեցի զքարոզգիրքս Ե ոսկի, և եդի յիշատակ ինձ և ծնօղաց իմոց, հօրս Մխիթարին, և մօրս Մուրվաթին, և եղբօրս Տէր Խաչատրին, և Ինքնատիոսին, Ցովասափին և Ղազարին, եդի ի սուրբ ուխտս, որ կոչի յԱպահունեաց վանք։ Ի դուռն Սուրբ Աստուածածնին և Սուրբ Նիկողայոս սքանչելագործ հայրապետին, և Սուրբ Ցակոբայ կենաց բարեխօսին, և Սուրբ Թորոս նահատակին, և այլ սրբոցն որ աստ կան հաւաքեալ։ Ի ժամանակս առաջնորդութեան իմոյ, և ի հայրապետութեան Տէր Անդոնին, և Տէր ըՍտե (թ. 330ա) փանոսին, և այլ ամենեցուն վանիցս միաբանիցն մեծի և փոքու։ Ով ոք խընամք տանի ի սմայ, և յուսով, և սիրով, և հաւատով, պատուեն սմայ, աւրհնեալ լիցին յԱստուծոյ և ամենայն սրբոց նորա։ Ոչ ոք չունի իշխանութիւն գնելոյ կամ գրաւելոյ, կամ ծախելոյ, այլ խնամովք պահողքն աւրհնեալն իճ ի յԱստուծոյ։ Թուականին ՌԻ (1572)։ Ցիշեցէք զՄկրտիչ վարդապետս, և լի սրտիւ ողորմիս ասէք իւր ամէն մերձաւորացն և թողութիւն խնդրեցէք։ Ով որ ողորմիսն լի սրտիւ ասէ Աստուած գիւրեանց մեղքն թողու; ամէն, Հայր մեր որ յերկինս։

Թ. 336բ.—(գրչափորձ) ա ր գ դ ե ղ է։

Թ. 337բ.—Քրիստոս Աստուած ողորմեայ Կիրակոս վարդապետին և թող զմեղք նորին զմահու չափն և զներելին բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին և կենսաբեր Սուրբ Խաչին և Ցովանու Կարապետին և ՍրբոյնՍտանոսի Նախավկային և Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և ամենայն Սրբոց գնդին ողորմեցիս Կիրակոսին, ամէն, թւ. ՊՂԴ (1445)։

ՌՄԾէ (1808)։

23 յուլիս 1915, Նազարէթ Շատուրեան։

Սարգիս Արզումանեան, էվէրէկցի։

№ 242

ՄԱՇՏՈՑ

Թերթերը՝ 129։—Պրակները՝ 11, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ Բ պրակը 10 և Թ պրակը 11 թերթից են։—Մեծությունը՝ 17×13,5×2,2 սմ.։—Նյութը՝ դեղնած և խունացած դիմացկուն թուղթ։—Կազմը՝ ժամանակին եղել է կաշեկազմ, սակայն հետագայում ընկել է։ Մնացել է միայն կռնակի կաշին։—Պահպանակներ՝ չունի։—Վիճակը՝ քայքայված, սկզբից մի ամբողջական պրակ պակասում է, իսկ վերջից էլ թերի։ Տեղ-տեղ ցեցակեր է։—Գրությունը՝ միասյուն։—Դատարկ թղթեր՝ չունի։—Տողերը՝ անհամաչափ, 17—18։—Գծումները՝ ճնշումով։—Գիրը՝ բոլորգիր։—Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի միայն ութ շատ հասարակ զարդագրեր, իսկ մնացյալ գլխատառերը և որոշ վերնագրեր էլ գրված են կարմիր թանաքով։—Գրիչը՝ անհայտ։—Պատվիրատուն՝ անհայտ։—Ստացողը՝ շատ հավանարար նույն ինքը ձեռագիրը գրողն է հանդիսանում։—Ժամանակը՝ ԺԷ—ԺԸ դարեր։—Վայրը՝ անհայտ։—Ծանոթություն՝ սույն ձեռագիրը նվեր է ստացվել կաhիրեաբնակ Արտաշես Գարտաշյանից Վեհափառ Հայրապետի միջոցով 1963 թվականի նոյեմբեր ամսին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 7ա.—(Կանաչ թանաքով կնիք).

Հաւաքածոյ Արտաշէս Գարտաշեանի, Գահիրէ։

(Սույն կնիքը կրկնվում է 11 այլ տեղերում ևս՝ թ. թ. 20ա, 28ա, 29ա, 42ա, 58ա, 68ա, 90ա, 107ա, 117ա, 118ա և 128ա)։

Թ. 80.—4 Rey. 2. V. 19.

Թ. 80բ.—Ezech. 47.

Թ. 82բ.—1 Cor, 10.

Math. 4, 13.

Թ. 129բ.— كتاب أرمينى (Կիտաբ արմանի=հայերեն գիրք)։

(Նույնը և գրված է եղել թ. 1ա-ում, որ սակայն հետագայում ջնջվել է)։

№ 243

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Թերթերը՝ 33։—Պրակները՝ 3, անհամաչափ, Ա՝ 10, Բ՝ 12, և Գ՝ 11 թերթից են։—Մեծությունը՝ 16×10,8×0,6 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հասարակ բարակ թուղթ։—Կազմը՝ չունի։—Պահպանակներ՝ չունի։—Վիճակը՝ անբավարար, սկզբից և միջից թերի։—Գրությունը՝ միասյուն։—Դատարկ թղթերը՝ 32 և 33։—Տողերը՝ 35—36։—Գծումները՝ ճնշումով։—Գիրը՝ նոտրգիր։—Զարդագրությունը՝ չունի։—Գրիչը՝ անհայտ։—Պատվիրատուն՝ անհայտ։—Ժամանակը՝ ԺԸ—ԺԹ դարեր։—Վայրը՝ անհայտ։—Ծանոթություն՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված արտասահմանից, Վեհափառ Հայրապետի միջոցով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 30բ.— Խոստովանութիւն երանելոյն մեծին Ալպրտի։

Գանկատ առնեմ զինէն առ քեզ, ով Աստուած Հայր ամենասուրբ հանդերձ համայնիւք արտասուօք և արիւնային կաթլեօք սիրելագունեղի Որդոյ քո առ այս, զի դեռևս ոչ ժամանեցի առ սկիզբն միոյ ուրուք առաքինութեան այնու, կատարելութեամբ որպէս աստէն գրեցաւ, սակայն խնդամ, զի զամենայնս առաքինութիւնս կատարելագունաբար ունեսցուք. զոր մարդկային իմացումն զօրիցէ ըմբռնել։ Խոստովանիմ առաջի քո Տէր զի երանեալ է ի ներկայիս, և երանելագոյն եղիցի ի հանդերձելմնա, որ զայսոսիկ առաքինութիւնս ունի այնու կատարելութեամբ, որպէս աստեն գրեցեալք են, թէպէտ գուցէ նովազ բաւականք իցեն առ կեցութիւն։ Նաև հայցեմ ի քէն, Տէր, հանդերձ ամենայն ըղձիւ Որդոյ քոյ և Հոգւոյն Սրբոյ, և ամենից ստեղծուածոց, որպէսզի տայցես ինձ զնտրողութիւն ի մէջ առաքինութեանց հաճոյականաց և բնականաց, և նմանութեանց առաքինութեանց։ Եւ որ ոք ընթեռնոցու զայս նիւթ, կամ զայսմանէ լսիցէ, կամ խոկայցէ, զու ամենակարող Աստուած պարգևեա նմա զոնեայ զմիակ ճշմարիտ և զկատարեալ առաքինութիւն։ Ստոյգ եմ, զի որ ունի ի քէն, Տէր, զմինն ունի ի միասին զամենեսեան և որ աճի ի միում համանգամայն և յա(թ. 31ա)-մենեսին, և որ ոչ ունի զմինն, զոչ ոք ունի վասնզի ամենեքեանք միաւորեալք են ի շնորհս, ամէն, ամէն։

Եղերեցաւ գրգոյկ երանելոյն մեծի Ալպրտի յաղագս ճշմարտից և կատարեցելոց առաքինութեանց հոգոյ, որ և Դրախտ Հոգւոյ որջորջի, ի գովութիւն սրբազունեղեր Երրորդութեան, ամէն։

(Այստեղ տրվում է ձեռագրի 42 գլուխների ցուցակը)։

Թ. 31բ.—

Գիրք այս Դրախտ Հոգոյ կոչի,
Անուշահոտ ծաղկամբ է լի,
Մտադրաբար ընթերցողաց,
Բուրէ ի քիմս զհոտ կենի,
Իսկ զիմացուածն ըմբռնօղաց,
Այնուչևետ զմայլողաց,
Աղդ է ընկճել զախտս մարմնոյ
Եւ հաղորդիլ անանցկանաց
Առաքինութեանց ի բով ոսկոյ,
Փորձիչ բնաւից նոցունց գործոյ,
Յորմէ արդեօք և առ որ շարժին.
Յայտ յանդիման առնէ հոգոյ,
Իսկ
Որք կեղծմամբ գործեն զբարին,
Եւ զախտ մարմնոյ ի ներքս ունին,
Սա ցուցանէ գոլ մոխրալից,
Սօդոմական խնծոր զնոսին.
Սա է կրպակ ինչ հոգէլից,
Յորում են դեղք վերաց բնաւից.
Միայն զանօթ տենչման խնդրէ.
Զրիաբար տայ ամենից։
Արդ խնդրեսցուք մեք ի Տեառնէ,
Զշնորհ և սէր մեզ զայսմանէ,
Զի մի գուցէ արտաքսիցիմք,
Զդրախտն հոգու ի կոխմանէ։
Ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 32ա.—(Գրված է ձեռագրի առաջին հինգ գլուխների վերնագրերը)։

Թ. 32բ.—Յիշատակ է այս գրագիր տիրացու Յակորին Իպամէնեան որդին։

Արգ...ի գրչափորձեր։

Քաջութեանը։

Թ. 33ա.—(Գրված են ձեռագրի առաջին երեք գլուխների վերնագրերը)։

Յակոբ իր։

Թ. 33բ.—Մտերիրիմ Պարսն Յովաննէս։

№ 244

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԻ

Թերթերը՝ *112։*—Պակեները՝ *9*, զանազան չափսի՝ *Ա, Զ* և *Թ՝ 10, Դ, Ե, Է* և *Ը՝ 12, Բ* և *Գ՝ 16* թերթ։—Մեծությունը՝ *16×11×2,7 սմ.։*—Նյութը՝ դեղնած և խունացած հասարակ թուղթ։—Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի առջևի երեսի ներքևի մասը պակասում է։ Կաշվի վրա ճնշումով զարդեր են նկարված երկու երեսների վրա։—Պանպանակները՝ սկզբում կա երկու թերթ հասարակ թուղթ։—Վիճակը՝ բավարար։—Գրությունը՝ միասյուն։—Դատարկ թղթեր՝ չկան։—Տողերը՝ *20։*—Գծումները՝ ճնշումով։—Գիրը՝ նոտրգիր։—Զարդագրությունն՝ չկա։—Գրիչը՝ անհայտ։—Պատվիրատուն՝ անհայտ։—Ժամանակը՝ *ԺԷ—ԺԸ* դարեր։—Վայրը՝ անհայտ։—Ծանոթություն՝ նվեր է ստացված Հայաստանից, Վեհափառ Հայրապետի միջոցով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.—Սկիզբն և նախադրութիւն գրոցն որ ասի ըստ յունաց Պէրիարմէնիաս, և հայերէն Յաղագս մեկնութեան, արտադրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտէլէ, և թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ։

(Գիրքը բաղկացած է 33 գլուխներից)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Ватя армянски книга под поручик Захаров Антонов Захаров ботів арданов Прулеян.

Рапорту мелик Вогошан, мелик Давутов, гаспопдин Иеля Маркаряну на.

Книга армянски тая мня Хачатур Попу манахов Назарян.

Թ. 2բ.—Արժանաոր։

Թ. 31բ.—Կրատկի։

Թ. 42ա.—Կրատուրկ։

Թ. 81բ.—Ашенаанян, Мартян, Дашастунян, Хачатурян, Вортапетян, Хаанаян, Ара..., Базкевич, Кучакалян, о...цар Хачатурян.

Баласанян (*4 անգամ*)։

Թ. 82ա.—Астапатнян (*17 անգամ*)։

Թ. 112բ.—Սրբազան Մաթէոս Արքեպիսկոպոս։

Գրեաց Սրբազան Մաթէոս Արքեպիսկոպոս կանոնից։

Աբ աւար Ծատուրով վկայէմ։

Եչեայ Շահնայզարով կվկայէմ։

№ 245

ՂՈՒՐԱՆ

(Արաբերեն)

Թերթերը՝ *304։*—Պրակները՝ *30, յուրաքանչյուրը 10-ական թերթից, ի բաց առյալ Ա՝ 11, և Լ՝ 13 թերթից։*—Մեծությունը՝ *16×11,6×3,1 սմ.։*—Նյութը՝ *դեղնած և տեղ-տեղ կեղտոտած բարակ, դիմացկուն թուղթ։*—Կազմը՝ *կաշեպատ ստվարաթուղթ։*—Վիճակը՝ *լավ։*— Գրությունը՝ *միասյուն։*— Դատարկ թղթեր՝ *չկան։*—Տողերը՝ *15։*—Գծումները՝ *ճնշումով։*—Գիրը՝ *ընթեռնելի, մաքուր և գեղեցիկ արաբական նասխի տառեր։*—Զարդագրությունը՝ *ձեռագրի առաջին երկու էջերը ծաղկանկարված են արաբական ոճով, կան գունավոր երկու լուսանցազարդեր, ինչպես նաև ծաղիկներ։ Գրությունը գրված է երկու շրջանակներում, որոշ բառեր ընդգծված են ոսկեգույն գծերով։ Ձեռագրում կան նույն տեսակի բազմաթիվ լուսանցազարդեր։ Օգտագործված են ոսկեգույն, կապույտ և կարմիր գույները։ Ամբողջ ձեռագրում տեքստը առնված է կարմիր գույնի շրջանակի մեջ։ Բոլոր նախադասությունների վերջում կա մեկական ոսկեգույն մեծ կետ։ Բոլոր էջերի վրա տեքստը գրված է 6,7×11,7 սմ. չափերով քաշված մի կարմիր շրջանակում։ Գլուխների վերնագրերը գրված են կարմիր գույնով։*—Գրիչը՝ *պալատի գրագիր Իսմայիլ էլ-Ջուհդիի աշակերտ Իսմայիլ Քամիլ։*—Պատվիրատուն՝ *անհայտ։*—Ծաղկողը՝ *շատ հավանաբար նույն ինքն ձեռագրի գրիչը ծաղկել է այն։*—Ժամանակը՝ *1824 թ.։*—Վայրը՝ *անհայտ։*—Ծանոթություն՝ *սույն ձեռագիրը նվեր է ստացվել Բուխարեստից, պր. Հովհաննես Գալփաքչյանից, ձեռամբ պր. Մանաշի։*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1բ.—Բի-իսմ-Ալլահ էլ-ռահման էլ-ռահիմ Ահմեդ լիլլահի ռաբ էլ-ալամիյա. էլ-ռահման էլ-ռահիմ. մալիքի յաումի էլ-դինի. իյաքա նաաբուդու վաիյաքա նաստայինու. ահդինա էլ-սիրատ էլ-մուստաքիմա. սիրատա էլ-դինա անամտա ալեյհիմ ղայրի էլ-մաղդուբի ալայհիմ ուալա էլ-դալինա։

Թ. 2ա.—Բի-իսմ Ալլահ էլ-ռահման էլ-ռահիմ ալամա զալիքա էլ-քիթաբու լա-ռաբբա ֆիյհի հուդդայի լիլմուտաքին. էլ-դինա յուըմինուն բիլղայբի վայիքիմունա էլ-սալաուատա ուամիմմա ռազաքունա հում յունֆիքունա. ուալդինա յուըմինունա բիմա ունզիլա իյաքա ուամա ունզիլա քաբլիքա ուաբիլախիրատի հում յուքինունա։

Թ. 304ա.—Ահմեդուլիլլահի ալա էլ-տամամի ուալսալուտու ուալսալամու ալա Մուհամմեդին խայրու ալլա նամի. ուաալա ալիհի ուասահաբիհի էլ-քիրամիհի քադուաքահա էլ-ֆարաղու մին թահրիրի հազա էլ-մուսհաֆի էլ-շարիֆի աան յադդի էլ-աբդի էլ-դաիֆի Իսմայիլու Քամիլ մին թիլամիզի Իսմայիլու էլ-Ջուհդի քաաթիբու էլ-սարայա էլ-սուլթանի ղաֆար-Ալլահու լահու ուալաուալիդայհի ուալիուստազիհի սանատ 1240 (հիջրայի)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 57ա.—Վաքըֆ։

(Ձեռագրում կա սև սատինի մի կտոր, 20×12 սմ. չափերով, որի վրա գրված է հետևյալը).

Լա իլայա իլլալահ, Մուհամմեդուն ռասուլ Ալլահ,

(Շարունակելի)